

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերէն)

Յայտարարութիւն ընդունւում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Անգուստ կրքեր.—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տեղեկութիւններ Սուրմալուի գաւառից. Հայոց թաւաճում. Հայի արտադրութիւնը Գարալիւսում. Նամակ Արաբիայից. Նամակ Եգիպտոսից. Նամակ Եթովպիայից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մուշի վիլայէթում. Յոյն դրամական Բոջարիս. Արաբիայի լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Վրացի մասնատականներ.

ԱՆՋՈՒՍՊ ԿՐԲԵՐ

I

Եթէ անգուստ կրքեր ունենալը մասնաւոր կեանքի մէջ գովելի բան չէ, որքան աւելի անհրեղի է չիմանալ զսպիւր իր կրքերը հասարակական կեանքի գործունէութեան մէջ:

Հասարակաց գործիչը կոչված է հասարակութիւնն առաջնորդելու, ուրիշն նա իրաւունք չունի ազատ ընթացք տալ իր վայրենի, անգուստ կրքերին հասարակաց գործունէութեան ասպարէզում:

Հասարակաց գործիչից սպասում ենք ամեն բանում ստան, մտածած, կշռադատած վարմունքի և նա հասարակաց խնդիրներին ուղղութիւն տալու ժամանակ ամենամեծ յանգստը գործած կը լինի, եթէ իր անձնական համակրութեան կամ հակակրութեան տեսակէտից կը դատէ հասարակաց բոլոր խնդիրներին մասին, անգուստ կրքով կը վերաբերվի դէպի մարդիկ, հասարակաց շահը կը զոհէ իր անձնական վերաբերութեան զգացմունքներուն...

Կիցուք հասարակաց գործիչը անձնական թշնամութիւն ունի դէպի մի անհատ, կամ նրա ընտանիք: Եւ ահա այդ անհատին իբր թէ միտակցութեամբ հասարակաց գործիչը տպագրում է ամենքից յարգված և այժմ վախճանված մի բանաստեղծի թոյլ, չափազանցած, անբնական, հրէշաւոր տիպերով լի, ոչ մի գրական քննադատութեան չը դիմացող, վերջապէս անաղի թատրոնական դրամա, կամ աւելի լաւ է ասել՝ պամֆլետ, որը ընդգրկելու ինքն հեղինակը, անյարմար գտնելով իր կենդանութեան ժամանակ արդէն ոչնչացրել էր իր ձեռքով...

Այդպէս հասարակաց գործիչի անգուստ կրքը այնքան է կուրացնում իրան, որ նա իր թուականից նետը ուղղելով մէկի վրա խնայալէս դիպչում է ուրիշին և նրան է վերաւորում: Ուղեւորով միտակցել իր թըշ-

նամուն՝ նա ընդհակառակն միտակցում է գրուածքի հեղինակի անուան, քանի որ տպագրում է նրա թոյլ, անաղի գրուածքներին մէկը, այնպիսի մի գրուածք, որ ինքն հեղինակը պատուիրել էր իր ժառանգներին երբեք չը տպագրել, մի գրուածք, որի մասին նա շատ անգամ կրկնել է իր կնիքը՝ թէ երբեք չը պէտք է լըյտ անեն:

Եւ ահա հասարակաց գործունէութեան մէջ անգուստ կրքերի հետեւանքը, մէկի դէմ ունեցած իր ինչ որ անձնական հաշիւներին բաւականութիւն տալու համար, հասարակաց գործիչը այնքան մոռնում է իրան, անգուստ կրքը այնքան կուրացնում է նրան, որ նա ինքն չէ նկատում թէ փոխանակ իր թշնամուն, միտակցու, նա անողորմաբար և անկողմնորէն խաղում է «մեռած բանաստեղծի յիշատակի, անուան, փառքի և բարեկամութեան հետ»:

II

Մի այլ օրինակ: Հասարակաց գործիչը անձնական թշնամութիւն ունի մի որ և է դպրոցի տեսչի դէմ: Եւ ահա անգուստ կրքը նրան այն աստիճան է կուրացնում, այն աստիճան յանցանոր ինքնամոռացութեան է հասցնում նրան, որ այդ գործիչը իբր թէ իր թշնամուն, դպրոցի տեսչին անձնական միտակցութեամբ համար՝ ամբողջական սխառեմ, վայր զցելով նրա յարգն ու պատիւը ուսումնարանական վարչութեան աչքում, ամենաստոր կերպով դրպարելով այդ դպրոցները, իբր թէ նրանք թշնամական դիրք են բռնել պետական լեզուի վերաբերմամբ:

Եւ այդ բոլորը կատարվում է մի մարդուն՝ իր անձնական թշնամուն միտակցութեամբ...

III

Ահա հասարակաց գործունէութեան մէջ անգուստ կրքի վտանգաւոր հետեւանքը:

Անձնական թշնամուն իբր թէ միտակցութեամբ խողով ամենքից յարգված բանաստեղծի յիշատակի, անուան և փառքի հետ, տպագրելով հանդուցեալ բանաստեղծի գրուածքը, նրա կամքին հակառակ...

Մի այլ թշնամուն իբր թէ միտակցութեամբ՝ աշխատել վայր զցել իշխանութեան աչքում ամբողջ դպրոցական սխառեմի յարգը, պատիւը և բարի համբաւը...

Եւ այդ տեսակի գրական գործունէու-

թիւնն անուանվում է հասարակաց կարծիքը դեկալարող հասարակութիւնն առաջնորդող ու նրան կրթող մասնաւոր...

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՍՈՒՐՄԱՆՈՒԹԻՒՆ ԳԱՄԱՆՈՒՑ

Այս 1892 թիւը Սուրմալուի ժողովրդի համար գործադրութիւն միայն բերեց.—ամբողջ դարունը անցած սարսափելի յորդ անձրևներով, որը արգելեց եղաւ երկրագործներին կանօնաւոր ցանքարութեան. գրան յաջողեց եռամսեայ երաշտութիւնը, որը ոչնչացրեց գրեզապու ամբողջ աշխատութիւնը: Ծանր հողը մի կողմ թողած՝ վրա հասաւ աշխարհաւոր խօշերան իր կրտսեր եղբայր ծաղիկ հիւսնորթեան հետ. առաջին հասակաւորներին էր ամանում, իսկ երկրորդը—փոքր երեխաներին: Կռնային թուրք և քիւրդ գիւղերում քիչ երեխաներ կը պատահէին, որ անձնակազմ չը լինէին ծաղիկից, դեռ մի կողմ թողած մոռնողները: Այժմ դադարել են խօշերան և ծաղիկը, բայց ծաղիկ է մի նոր հիւսնորթիւն. —գա է առաւարու քիւրդը, որը հայի թանգութեան չնորսով կազմ և պատրաստ է ամեն մի ճանապարհի վրա ուրիշ—խաղաղ մարդու աշխատանքը կողոպտելու համար. խօշք Սուրմալուի լեռնային մասի վրա է:

Վերջին ժամանակները քրդերն էլ լաւ ցանքարաւ են դարձել. նրանք իրանց ցանքերը վերջացնելուց յետոյ թողնում են գիւղերը և ոչխարներ ի հետ բարձրանում են ելադինը և անկողմ կերպով ոչնչացնում են ուրիշների ցանքերը, խոտերը, արօտները և այլն, միանգամայն անարատ թողնելով իրանցը: Այս տարի աշնան, քրդերը վերադառնալով ելադինից՝ տեսան, որ երաշտութեան չնորսով անպտուղ են մնացել արտերը, ուստի մտածեցին նախկին սովորութեամբ ձմեռվան պաշար պատրաստել, և ահա խմբով վերադառնում են ձորերում, կրճերում և կողոպտում են անցող դարձողին: Քրդից կողոպտուկը ներկայումս այնքան սովորական է դարձել սուրմալուցու համար, որ այդպիսի դէպքերում քսանից մէկը հալի է դիմում ոստիկանութեանը տեղեկացնելու, որովհետեւ անցանք է անց... Վերջապէս աշխարհիս երեսին երբ պէտք է զսպեն այս մարդակերպ հրէշները:

Վեց տարի շարունակ, անդադար և ամենաբա-

րեխիղճ կերպով աշխատելուց յետոյ՝ թողեց և հեռացաւ իր գիւղից առաջ-ուսուցիչ Աւետիս Ահարոնեան: Այդ վեց տարվան ընթացքում ինչ հաւանք, ինչ բարոյական տանջանք անես, ընթացիկ, որ նա չը կրեց իր բարեխիղճ աշխատութեան փոխարէն, ինչ տեսակ ստոր ինտրիգաներ և դաւեր անես, ընթացիկ, որ չը լարվեցին Ա. Ահարոնեանի և իր ընկեր ուսուցիչների դէմ, որոնք միասին, ձեռք ձեռքի տուած առաջ էին տանում ուսումնարանի գործը: Հողալ աշակերտներ բազմացնելու և նրանց բարոյապէս և մտաւորապէս զարգացնելու մասին, հողալ գրաւարանի, թատրոնի, դրամական կրթիւնների մասին և որ ամենապետական է՝ հողալ նախ ուսումնարանական գործը, աշակերտը և նրա բարոյական ու մտաւոր զարգացումը: Այդ բոլոր աշխատութեան փոխարէն նա հաւանքեց և տանջվեց միայն ստոր ինտրիգաների միջոցով: Իսկ եթէ նա այդքան ստոր ինտրիգաների միջոցով չէր հաղթանակում, ապա ինչպէս կը լարվեցին իր ուղիները կրթութեան գործում՝ պէտք բռնել էր և չէր կամենում ձեռքից բաց թողնել:

Աւետիք չեմ համարում հրաւիրել հողալ բարձր իշխանութեան ուղարկութիւնը իր գիւղի հայ քահանաներից մէկի վրա: Սրա դէմ շատ անգամ բողոք և դանդաղանք են դնացել Ս. Էլմիաճին:

Ժողովրդի մէջ նորից բողոք-հանրապիւր է պատրաստվում այդ քահանայի դէմ Ս. Էլմիաճին դարձնելու, յուսով ենք, որ վերջապէս մեղաւոր պէտք է կրէ իր պատիժը:

Սուրմալուի քահանաները առհասարակ շատ ստոր զարգացման տէր են, որոնք իրանց տգիտութեան պատճառով չեն կարողանում ժողովրդին բարոյապէս առաջնորդել և քրիստոնէական առաքինի դատաւարները արմատացնել նրա մէջ և ժողովրդին չը ստուգնել եկեղեցուց: Ուստի անհրաժեշտ է, որ հողալ բարձր իշխանութիւնը մէկ զարգացած քահանայ կամ վարդապետ գործակալ նշանակի ուրիշ տեղից (որովհետեւ տեղում չը կայ), որը բացի մի քանի պաշտօնական գործերը կատարելուց, ուսումնարանական և եկեղեցական գործերին վերահստու լինելուց՝ խիստ հակողութիւն ունենայ ներկայ քահանաների յոռի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎՐԱՅԻ ՄԱՀՄԵՏԱԿԱՆՆԵՐ

Վերջին երկու ամսուայ ընթացքում «Խմբագիր» մէջ տպվեցան մի շարք յօդուածներ ու թղթակցութիւններ վրացի մասնաւոր տակաւններէ մասնաւոր: Այդ հետաքրքիր յօդուածները հիման վրա կարող ենք տալ մեր ընթերցողներին մի ամփոփ պատկեր այդ խաղաղ ժողովրդի:

Պէտք է նախ ասած, որ բացի բուն վրաստանի կամ Գարթալիայի վրացիներից (քարթվելի), կան նաև նրանց ցեղակից և համաբնակ թէ մի և նոյն լեզուով խօսող, երեք փոքրիկ ազգութիւններ, որոնք հին ժամանակ կազմում էին բոլորովին ինքնուրոյն ու անկախ թագաւորութիւններ և երբեմն էլ նուաճվում ու քաղաքականացան մի ամբողջութիւն կազմում բուն վրաստանի ժողովրդի հետ: Գրանք էին՝ խմբեթիպի, Մինգրէի լիայի ու Գուրիայի վրացիները, որոնք մինչև օրս էլ ապրում են իրանց հին երկրներում ու տեղ բռնում վրաստանի հիւսիս-արևմուտքից մինչև Սև ծովի հարաւ-արևելեան ափը:

Միջին դարերում դրանք տարածվել էին նաև իրանց սահմանակից այն հողերում, որ կազմում էին Կարսի, Արդահանի, Արշաունչի, Արգվինի և Բարձր Հայքի գաւառները՝ ձորոտ դեռի չըջանալուց: Տան և վեցերորդ դարում, այն է Գուրիայի Թամար թագուհու օրերում, այդ դաղթական վրացիները ընկնում են վերջնականապէս օսմանցիներին իշխանութեան տակ ու մնում նրանց ձեռքում մինչև վերջին ուսումնական պատերազմը, երբ նրանք մնում են Աղտորի կայսրի հովանու տակ:

Այստեղ, օսմանցիների մօտ, դրանք կարողանում են սրտանել Գրիստոսին միմիայն հարիւր տարի, իսկ այնուհետեւ այդ ահալին, վրաց լրագրի կարծիքով այժմ 150,000 հողուց բաղկացած, գաղթականութիւնը մնում է ամբողջովին մասնատականութեան գիրկը...

Ահա այդ օրից մինչև ներկայ օրս, այսինքն՝ ճիշդ 260 տարեայ ընթացքում, դրանք կրում են «վրացի մասնատական» անունը:

«Վերթիպ» տուած տեղեկութիւնները վերաբերում են զխաւորապէս Աճարայի և ոչ ամբողջ նոր նուաճված երկրի վրացի մասնատականներին: Աճարան գտնվում է ձորոտ դեռի և Գուրիայի, իսկ միւս կողմից Ախալցխայի ու Բաթումի մէջ տեղում: Գլխաւոր կենտրոն—Քէշա գիւղաքա-

ղաքը, որ բաժանում է այդ գաւառը վերին և ներքին մասերի, գտնվում է յիսուն վերստ հեռու Բաթում քաղաքից: Վրացի մասնատականները ունեն արդեալ մօտ 200 գիւղ, 10,000 ընտանիքներով և մօտ 60,000 ընտանիքներով: Գրանք մինչև օրս պահպանել են իրանց մայրենի, վրացերէն լեզուն, թէև փոքր ինչ թվաբախտաւ: Վրացերէն գիտեն նաև մօլմաները, որոնց թիւը հասնում է Աճարայում յիսուսի: Մարդու սկզբը մի ուրիշ տեսակ է դառնում, երբ լսում է այդ հողաւորականների անունները—մօլլա Սուլէյման Բերիճէ, մօլլա Հուսէյն Չիկիլիճէ, մօլլա Ալի Դիստամիճէ և այլն... Վրացի մասնատական չէ նաև օրմանից մի քանի ամլա առաջ վախճանված ամբողջ Աճարայի հողաւոր գլուխը, որ կոչվում էր մուֆթի խալիլաշվիլի...

Կես ևս վախճանական թուականներին դրանց վրա ուղարկութիւն են դարձնում Գուրիայի յայտնի իշխան Գրիգոր Գուրիէլին և Թիֆլիսի այն ժամանակվայ վրացի ինտելիգենցիան և սովորութիւն են չինում ուղարկելու այն կողմերը վրացիներէն պարբերական հրատարակութիւններ ու գրքեր: Ի հարկէ, այդ օրմութիւնը աւելի կանօնաւորուց ու ծաւալուց վրաց մասնատական աշխարհը ուսուց տեղութեանը միացնելուց յետոյ (1878): Այժմ, ի միջի այլոց, նրանց օգնում է

նաև վրաց «Գրագիտութիւն տարածող ընկերութիւնը». օգնում է նաև վրաց ինտելիգենցիան, առ ժամանակ փոք ժողովրդով ու հազարաւոր էթնոազգի բոլորները գնելով և ուղարկելով: Բայց պէտք է աստեղ աւելացնել, որ երբեք այդ գրքերի մէջ չեն լինում քրիստոնէական կրօնի վերաբերեալ բանքի, այլ միայն գեղարուեստական գրուածներ ու դանաղան պարբերականներ, վրացի մասնատականը խառնութեամբ պահանջում է, որ իր վրա քրիստոնէական կրօն չը պատուաստեն...

Այդ հանգամանքը ստիպել է վրացի գործիչներին գրելու նրանց համար, ի հարկէ, վրացերէն լեզուով, «Մասնաւոր կեանք» և զանազան մասնատական աղօթքներ ու միւս գրքերի հետ միասին Աճարայում ցրվելու: Այդ գրքերի ու գրքիկների չնորսով այժմ Աճարայի մասնատականների մէջ մեծ արագութեամբ տարածվում է մայրենի գրադիտութիւնը, չը նայելով որ այնտեղ դեռ ևս ոչ մի ազգային ուսումնարան չունեն, այլ բոլոր եղածները տաճկական հին «մաղբատներ» են:

Թէ ինչ ուղեորութեամբ են ընդունում այդ նուէրները վրացի մասնատականները իրանց այդ հեռաւոր եղայրներից—այդ երևում է պ. Զ. ձիւնիսաճէի «Վերթիպ»-ում տպած նամակի հետեւալ կտորից:

«Որ սր գնացի Աճարայում և ինձ տեսան,

կրկններ և պարունակներ, որոնք աղիտի ժամանակ մեծապէս օգտութիւն հասցընէ աղքատ ընտանիքներին: Մի քանի եւս ասուել, որովհետեւ այդպիսիներին թիւը, համեմատած բոլոր ունեւորներին հետ, չափ և չափ սուղ էր: Նրանց աչքին չէր գալիս բոլորովին «սոքոմութիւն», «բարեգործութիւն» ասված բաները: Նրանք միայն իրանց ազատ և անկախութիւնն էին ուղիղութիւն և մեծագործ բարեկեցութիւն մատուցանում:

Այդ իսկ որովայնապաշտ հարուստ ընտանիքներին էին դիմել տեղիս հոգեւոր զարմանքից աւարտած՝ չունեւոր աշակերտներէ մի քանի հոգի օգնել իրանց՝ արտասանման դժուար աշխատել իրանց ուսումը շարունակելու համար: Բայց ոչ մէկից խեղճ աղաները մի բաւարար պատասխան չէին ստացել ու գլխակոր յետ են դարձել: Նոյն պատուին են արժանացել և մի քանի պարունակներ, որոնք դիմել էին նպատակ խնդրելու Բարեգործական ընկերութեան տեղիս ճիւղին, ուսումնականներին և եկեղեցիներին համար:

Օգնութիւն, սոքոմութիւն, բարեկեցութիւն այդպիսի հարուստ զարմանքիցներէ, երբեք հարկաւոր չէ և նոյն իսկ մի անհնարելի յանդիման է:

Տիկին Գ. Աթաբեկեանց, որը մինչև այժմ անթիւ բարեկեցութեան հարցին շուշու աղքատ և չունեւոր զաւակներէ մէջ, այս տարի հոգեւոր զարմանքից աւարտած է. Բարեկեցութեան իր ծախսով ուղարկեց արտասանման, շարունակելու աշխատել ուսումը: Թէ դրանով ինչ մեծ գործ է կատարած լինում յարգելի տիկինը և ինչ յարգանքի է արժանի, դա բոլորովին արտայայտել զրոյ չէ կարելի. միայն այդքան կանանք, որ տիկինը կարող է մեծ օրինակ դառնալ իր այդ գեղեցիկ վարմունքով միւս հարուստ կանանց, որոնք միշտ ինչոյցներ սարքելու ու նոր մօղայով կարել տրւած դերիաներ հանդիսութեան համար են մտածում:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՈՒՆ

Մօսկւա, 5 հոկտեմբերի

Խնդրեմ «Մշակութեան» տեղ չնայեք երկուողիս: Երեք տարի սրանից առաջ Բազուկ մէջ հայ կանանց Բարեգործական ընկերութեան կազմելու գործում՝ բազմ ունեցայ մի փոքր աշխատել եւս եւ այն յարգել տիկիններ ընկերակցութեամբ, որոնք համարեալ բոլոր ոյժերը նուիրել էին գործի աջակցութեանը: Բարեկեցութեան հարցին, որոնք խօսում են, և շատ անգամ հենց ինձ ուղղակի ասել են, որ ես ուսումնական շարունակում եմ իւր թէ այդ (դեռ ես չեմ կազմակերպված) ընկերութեան հաշուով:

Չը դիտեմ ինչ է այդ խօսակցութիւնների խկական նպատակը, բայց թող յայտնի լինի խօսողներին իմ հրապարակական հերքումը, որ ես մինչև այժմ չեմ ստացել և նպատակ էլ չեմ ունեցել ստանալ օժանդակութիւն յիշեալ ընկերութիւնից:

Աօֆիա Պետրոսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՌԻՆԵՐ

Բարձրագոյն կանանց կուրսերում, ինչպէս հարկում են մայրաքաղաքի լրագրողները, ներկայումս ուսանողուհիների թիւը հասնում է 400-ի:

«Տարազ» շաբաթաթերթը միամտութեամբ կարծում է թէ Բաֆֆիի գերեզմանի վրա 10,000-անոց արձան կանգնեցնելը և նրա գրեթէ հրատարակելը միմեանց չեն խանգարում: Կարելի է արձան էլ կանգնեցնել, քրքրել եւ հրատարակել, ասում է միամտաբար շաբաթաթերթը: Կարելի է բայցի դրանից՝ ժամանակներին էլ ապահովել, Բաֆֆիի անուամբ ստիպեղծութիւններ էլ պահել, մրցանակներ էլ նշանակել: Կաւեղանքներ մնան: Այո, ամեն բան կարելի է, բայց թէ ինչ դուրսի, որ հաղթանակում, չը լինի թէ այն հաղթանակում, որ պէտք է հաւաքէ «Տարազ» շաբաթաթերթը, որն արժան ինքնապատասխան կերպով յայտարարում է, թէ ստորագրութիւն է բանում իր խմբագրութեան մէջ: Մենք հաւատում ենք, որ «Տարազը» սխիւթ ստորագրութիւն կը բանայ իր խմբագրութեան մէջ, բայց թէ արդեօք փող ուղարկող կը լինի, ահա հարց:

Մեր խմբագրութեան մէջ ստացվեց այս օրերս Թիֆլիսում լոյս տեսած, 16 երեսից բաղկացած մի գրքիկ, «Հանրամատչելի խրատներ» վերնագրով:

Ըստ, որի մէջ խօսվում է այն մասին, թէ ինչպէս պէտք է պահպանել բերանի խոռոչը և ատամները՝ մանուկանց խօլբայի ժամանակ: Ի նկատի ունենալով ներկայումս խօլբայի գոյութիւնը մեր երկրում, կարելի է ասել որ գրքիկին հրատարակութիւնը նպատակադարձ է: Գրքիկին աշխատանքները է Պետերբուրգի ատամնաբույժ Սինիցին, իսկ հայերէն թարգմանութիւնը կատարել է Թիֆլիսի քաղաքային բուժարանի ատամնաբույժ Գ. Զ. Օրբելի, բաւական մատչելի լեզուով: Գրքիկը պէտք է տարածվի ամեն տեղ ճիւղաբար:

Թիֆլիսի վարժութիւնների ընկերութիւնը, որը հանդէսներ տեսնելու մէջ շատ եռանդուն է, հոկտեմբերի 18-ին պէտք է կազմէ մի դրամահաւաք-ժողովական առաւօտ, ի պատիւ ուսու ժողովրդական բանաստեղծ Կոլլիկի մահվան 50-ամեակի:

Քաղաքային դուռայի վերջին նիստում, հոկտեմբերի 12-ին կայացած, ի միջի այլոց քննվեց ջրանցքի վերաբերեալ մի խնդիր: Հարց է յարուցված, որ քաղաքը իր վրա առնի քաղաքացիներին ջրանցքից ջուր մատակարարելու գործը: Գուման ձայները մեծամասնութեամբ վճռեց բարձրացնել ջրանցքի ջրի գինը և նշանակել $\frac{3}{8}$ կոպէկ վիդրոյ: Թուրքիայից եւ տալիսներին համար, և $\frac{1}{4}$ կոպէկ վիդրոյ՝ ձեռքի ամանների համար: Բացի դրանից դուռայի վճռեց որ եթէ թուրքիայից և բը գործադուր անեն, համաձայն չը լինելով այդ գինը հետ, այն ժամանակ քաղաքը յանձն առնի ջրի մատակարարելու բանկիներին:

«Новое Обозрение» լրագիրը հարցրում է, որ երեքշաբթի, 13-ին հոկտեմբերի, Թիֆլիսի քաղաքային կրթկոմիտեան ընկերութեան վերաբերող մասնագործիկ նիստ էր կայացել, այն յայտնութիւնների առիթով, որ արել էր մասնագործիկ ընկերութեան զանապաղ մի. Տիգրանեան: Բոլոր նրա արած նկատողութիւնները բանիկ գործակալութեան այժմեան եղանակի մասին՝ վերաբերող մասնագործիկ քննեց և դատա արդարացի, մինչև անգամ նրա մի քանի առաջարկութիւններն ընդունեց ի գործադրութիւն, սակայն Տիգրանեանի պահանջը՝ գումարել ընկերութեան ընդհանուր արտակարգ ժողով՝ վերաբերող մասնագործիկ կարեւոր չը համարեց:

Մեկ խնդրում են տպագրել հետեւեալը. «Տեղեկացել ենք հաւաստի աղբիւրներից, որ դիմադրայի ուսուցիչներից մի քանիները յանձն են առնում պարագիկ հայոց եկեղեցական-ծխական ուսումնարանների ուսուցիչների և ուսուցչուհիների հետ, որպէս զի վերջինները կարողանային մինչև 1894 թիւը՝ պահանջել ուսուցչական ցեղը ձեռք բերել:

Մենք լսում ենք որ հայոց ծխական ուսումնարաններից միին ուսուցիչը պատրաստել է «Թեմական տեսուչ արք. Եղիշէ քահանայ Գեղամեանի» եռամսյա գործունէութիւնը՝ վերնադրով մի յօդուած, որը շուտով լոյս պիտի տեսնէ:

Երեք օր շարունակ մայրաքաղաքների պօստը չէր ստացվում Թիֆլիսում: Ասում են որ Ռուսաստանում արքան մեծ ձիւն էր եկել և այնպիսի փոթորիկներ էին լինում, որ երկաթուղիներից մի քանիները վրա գնացելները երթևեկութիւնը դադարեցրած էր այդ միջոցին: Երեկ ստացվեցան միասին ուսուցչ երեք պօստերն էլ:

Մօսկւայից, տիկին Վարվարէ Բանանեանցից ստացանք 10 հատ օսմանեան լրագր, հետեւեալ նամակով. «Ուղարկում եմ ձեզ տառն օսմանեան լրագր, որ ես Կ. Պօլուսկոյեմովից ստացելու ունեցայ ստանալու ար. ասպետ Ֆոնդից, յօդուս հանդուրեցալ Բաֆայի Պատկանեանի ընտանիքի»: Տիկին Բանանեանցից այդ ուղիները ստանալուն պէս մենք ծախել տուցինք այդ ուղիները Թիֆլիսի վաճառանոցում, և ստացանք ուսուցչ Բոնդիցի 92 թուրքի 80 կոպէկ: Ուրեմն նախկին 1555 թ. 40 կ. դուռարի հետ ունենք այժմ Պատկանեանի ընտանիքի օգուտն ընդամենը 1648 թուրքի 20 կոպէկ:

«Тифл. Листок» լրագիրը լսել է, որ քահանայ տէր Գէորգ Գալստեանց Թիֆլիսի վանքի մայր-եկեղեցու բակի սահմանագծի վրա կառուցված իր սեփական տունը, որն արժէ 5000 թուրքի, նուիրեց մայր-եկեղեցուն, այն պայմանով որ ինքն իրաւունք ունենայ իր կենդանութեան ժամանակ օգտվել այդ տնից:

Արմաւիրի գերանահալ զարդի վարչութեան յայտնի ուղեւորալի մասին շարունակում ենք: Յովհաննիսեան, Նոր-Նախիջևանից մեղ ուղարկել է մի երկար նամակ, որի մէջ պատմում է այն խաղաղութիւնը, որ թոյլ է տուել Արմաւիրի զարդի վարչութիւնը օրիորդի վերաբերմամբ: Մենք չենք տպագրում այդ նամակը, նախ որ օրիորդի գէպը յայտնի է մեր լրագրի մէջ տպված մի ուրիշ նամակից, և երկրորդ՝ որ նամակը շատ ընդարձակ է: Այդ նամակից էլ երևում է, որ օրիորդը հեռադրով հրաւիրում է Արմաւիր, ճանապարհ է ընկնում գէպի այդ քաղաքը և յանկարծ, սարսափելով իմանում է, թէ արդէն ուրիշն է հրաւիրված: Ներկայիցեք խեղճ վարժուհու անտանելի դրութիւնը մի անծանօթ, հեռու քաղաքում: Սկսվում է մի խուլ կուլ հողաբարձութեան և վարժուհու մէջ: Վարժուհին վճռում է հեռանալ քաղաքից: Բայց հողաբարձութիւնը այնքան անկողն է դառնում, որ դռն է վերադառնալու ճանապարհածախսն էլ ամբողջութեամբ չէ ուղում տալ: Վարժուհու օգնութիւն են համարում երկու հայ տիկիններ, որոնք հաւաքում են մի դուռար և նրան ճանապարհ գցում: «Ներկայիցեք կայաբան գնալով, դուռ է վարժուհին, ես չը դիտեի, թէ գէպի ուր գնում: Ես անիծում էի հայ վարժուհու կեանքը. ուղում էի գնալ Ռուսաստանի խորքերը, ուր կամ մի տեղ կը գտնեի, կամ կը կորչեի. բայց այդ օրպէս իմ մէջ միտք յղացաւ ուղեւորվել Նոր-Նախիջևան, այդ հայաբնակ քաղաքը»: Հասնելով այդ քաղաքը, օրիորդը դիմում է Գօգոյեան զարդի, և չնորհիւ այդ զղարկի տեսչուհու և վարչութեան՝ տեղ է տանում զարդի, և այդպիսով աղատվում սովից և վերտանդից...

ԲԱԹՈՒՄԻՑ մեղ գրում են. «Ամբողջ ամառը Բաթումում 26 մահվան դէպք եղաւ խօլբայից, մեծ մասամբ կանակածի, բայց ուսուցչ «НОВ. ОБЗР.» լրագիրը հալաղանքներն են թելը: Վերջին դէպքը եղաւ սեպտեմբերի 25-ին և այնուհետեւ դադարեց խօլբան: Բայց առել մեծ զգուշութեան համար ամեն միջոցներ դեռ շարունակում են գործ դնել. միջոցները, մինչև իսկ խաղողը, դեռ թոյլ չեն տրվում ծախելու: Չափազանցած լուրերը պատճառով դեռ ոչ մէկ կողմից մշակ դասակարգի սովորական խմբեր չեն եկած: Մշակները դեռ բանում են օրական 1 թ. 60 կոպէկով և նոյն իսկ 2 թուրքիով: Եղանակը հիմնալի է»:

Թիֆլիսեանց մի հայ օրիորդից Պատկանեանի ընտանիքի օգուտն ստացանք 2 թուրքի, ուրիշն նախկին 1648 թ. 20 կ. դուռարի հետ ունենք 1650 թուրքի 20 կոպէկ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՄՈՒՇԻ ՎԻԼՅԱՆՈՒՄ

Արտասանման հայոց մի լրագրում կարդում ենք հետեւեալը.

«Մոկուսը գիւղը Մուշ քաղաքին կէս ժամ դէպի արեւել կը գտնուի: 80 տուն հայ և թիւրք բնակիչներ բաղկացած, չինված է նախին «Աստղիկ» բերդի ստորոտը, առջին ունեւորով Մուշ լայնածաւալ դաշտը: Մոկուսը մասնաւորապէս նշանաւոր է անով որ Ալանի Պէյերն այստեղ հաստատած էին իրանց պալատ և բերդը: Այդ քիւրդ պէյերը մինչև 1840-ին ինքնապաշտպան էր Մուշ ամբողջ Մուշ դաշտին, Բաղէշին, Բուրմուռնին, Ախալքալիքին, մինչև Վանին, Տիգրանեանի և Երզրումի սահմանները: Ներկին բոլոր տուրքերը իրանք կը հաւաքէին առանց թիւրք կառավարութեան ստակ մը վճարելու: Բայց այդ թուականին, ինչպէս միւս քիւրդ ինքնապաշտպաններ, այնպէս ալ Ալանի պէյերը նուաճվեցան թիւրք բանակներէ, իրենց ամրոցներ կործանվեցան. սակայն իրենց ցեղ ընաչին չեղաւ բոլորովին. դեռ կան ու կիրմանս ազնիւ զաւթաւարտող մնացորդներն, որոնց գլխավորներն յիշեալ արդէն յայտնի եղած եղեւնագործ Մուսա պէյը որ թէն այժմ Մեքքէ կը գտնուի, սակայն իր տղան և եղբայրն այժմ կայրեն ու կը մրկեն Չուրպայ հայ գիւղերը. Մեքքէ պէյ որ խաղաղութիւն մէջ չէ մնացել աւեր որ չը գործի, Ձէգօ պէյ, Սելիմ պէյ Դիշիկի, Բեքիմ պէյ Ջուրիւնց և այլն, որոնք ցրված են Մուշի այլ և այլ գիւղերը»:

ՅՈՅՆ ԶՕՐԱՊԵՏ ԲՅՅԱՐԻՍ

Սեպտեմբերի 11-ին Յունաստանի Աթէնք մայրաքաղաքում երկարատե հիւանդութիւնից յետոյ վախճանվեց յայտնի յոյն գօրապետ Դ. Ն. Բօցարիս, նախագահ «Արևելեան դաշնակցութիւն» ընկերութեան: Զօրապետը 92 տարեկան էր: Յուլարկաւորութեան հանդէսը կատարվեց շատ շքեղ կերպով: Ժողովրդի անաղին բաղմունքիւ խանդավառ էր այն փողոցներում, որոնցով պէտք է անցնէր թափուրը: Բաղմունքը բարձրատիման սպաներ, որպէս նաև թաղաւորի ներկայացուցիչը, յոյն առաջին մինիստր Տրիկուպիսը, մինիստրներ՝ Սկուլուքի, Կրապուսիս և այլն, օտար տէրութիւնների դեսպաններ, ժողովրդի անհաղին բաղմունքիւ ու մեծաքանակ զօրք երաժշտութեան տխուր ձայնի տակ ուղեկցում էին հանդուցեալին մինչև նրա վերջին կայանը: Կարգացվեցան շատ ճառեր և դադաղի վրա դրվեցան պսակներ:

Զօրապետ Բօցարիսը պատկանում էր մի նշանաւոր յոյն ընտանիքի, որի անդամներից շատերն առաջնակարգ դեր են խաղացել յունական ազատամբողքիներին մէջ Յունաստանի անկախութեան համար: Զօրապետ Բօցարիսը առաջնակարգ տեղ է բռնում Յունաստանի անկախութեան պատերազմում: Նրա կեանքը հերոսական ձեռնարկների մի շարք է:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՌԻՆԵՐ

Կ. Պօլսից գրում են արտասանման մի հայոց լրագրին. «Այս վերջերս մի քանի տեղեր թիւրք կառավարութիւնն արդիւր է ևւրպացի միսիօնարներին զարդների շէքեր շինել. Գառը դիւղի Սիօնի Գոյրերի սկսած շէքը, նոյնպէս և Պէյրուքի Ժէդուքիները սկսած մի ուրիշ շինութիւն խախտում են: Յիւստասկան հիւպատոսը բողոքած է թէ, սակայն թիւրքերն ալ յամաւորութեամբ առաջ կը տանին իրենց քաղաքականութիւնը»:

«Кавказ» լրագրին հարցրում են Երզրումից, որ հոկտեմբերի 6-ից մինչև 13-ը այդ քաղաքում խօլբայից մեռել են 154 հոգի, իսկ Երզրումի վերայի գիւղերում նոյն միջոցին մեռել են 87 հոգի:

Պարսկաստանից հարցրում են «Кавказ» լրագրին, որ Ռաշադում և Էնդէլում խօլբան գրեթէ կատարելապէս վերջացել է:

Խօսելով գերմանական կառավարութեան դիտաւորութեան մասին՝ վերաբնակու մամուլի վերաբերեալ օրէնքը, գերմանական «Frankfurter Zeitung» լրագրին ասում է որ ինքն ոչինչ լաւ բան չէ սպասում այդ օրէնքի վերաբնակութիւնից և հաւատացած է որ նոր օրէնքը՝ հնից առել յետադիմ ոգով խմբագրված կը լինի, աչքի առչել ունենալով այժմեան կառավարութեան յայտնի յետադիմ հակումները:

Հանդուցեալ գերմանացի երաժիշտ-հեղինակ Վալդերի կինը, Կոզիմա Վալդեր, ուղևորվում է Պարիզ՝ ներկայ գտնվելու Պարիզի «Grand Opéra» թատրոնում իր հանդուցեալ մարդու «Meistersinger» օպերայի ներկայացման:

Սպանիայի Մադրիդ մայրաքաղաքում այս օրերս բացվեց «Հաղատ մուսուլմաններ» կոնգրէս: Կոնգրէսը շատ բազմամարդ է և նրա անդամները թուով գտնվում են բաղմունքի օտարաբնակներն էլ: Ի միջի այլոց կոնգրէսի քննութեանս առաջարկված են հետեւեալ հարցերը. 1) Ամերիկայի գիւտի ներդրութիւնը մարդկային մաքր աղատութեան վրա և 2) Ժամանակակից դադապարների ու կաթօրկուրեան փոխադարձապէս հակառակ լինելը: Բաղմունքը հետաքրքիր մէջ կային և կանայք:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՑ

Պետերբուրգ, 13 հոկտեմբերի: Ս. Պետերբուրգի բօրսա. Թիֆլիսի և Գուրմայիսի կալուածական բանկերի 6 և 50% դրամական թղթերը—102¼ և 99, 87¼. Թիֆլիսի քաղաքային կրկնապատկ ընկերութեան 50% օրկապիտաններ—97,62¼:

Պետերբուրգ, 15 հոկտեմբերի: «Новости» լրագրի խմբագիր-հրատարակիչը յայտարարեց որ «Южный Край» լրագրի լուրը՝ թէ «Новости»

Լրագիրը ուրիշի ձևով է անցնում հնարովի է:
ՎՈՐՈՆՆԵՐ, 15 հոկտեմբերի: Գուման վճռեց,
բանաստեղծ Կոլոզովի գերեզմանի վրա, հոկտեմ-
բերի 19-ին, նրա յիշատակի տոնակալության
օրը, կատարել հոգեհանգիստ՝ քաղաքային բոլոր
դասակարգերի և հաստատությունների ներկայու-
թեամբ: Դնել գերեզմանի վրա մի պսակ քաղաքի
կողմից, սկզբում գերեզմանի շուրջը մետաղից
ցանկապատ չինել, և մնայ կոչված փողոցը անու-
նել Կոլոզովան փողոց, վճարել գաւառական
դպրոցի տան աշակերտների ուսման վճարը,
ձեռք բերել Կոլոզովի կենսագրությունը հազար
օրինակ և տարածել քաղաքային դպրոցներում,
և խնդրել թղթաւորին կառավարությունից ամ-
բողջ Ռուսաստանում ստորագրություն բանալ

Կոլոզովի արձանը կանգնեցնելու համար:
ԲԵՐՈՒՆ, 14 հոկտեմբերի: «Boersen Courier»
լրագիրը հաճախում էր արդյունաբերական
փոխվել հացահատիկների մաքսահարկը, այն կար-
ծելը յայտնելով, որ եթէ օտար երկրի հացը չը
լինի, անհնար կը լինի հաց մատակարարել
գործերի մեծ մասին, և այդ դէպքում պատերազ-
մական պէտքերի համար յատկացրած բոլոր փո-
ղերը կը ծախսվեն ի դուրս:
ՎԻԵՆՆԱ, 15 հոկտեմբերի: Սուղանում ըսկա-
վեց ապստամբութիւն Մախիի դէմ, որը հետե-
ւանք է այն խտուրթիւնների, որ նա գործ էր
դնում նշանաւոր ցեղապետների դէմ:
Խմբագիր-Հրատարակող՝ ԳԻՐԻՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԺՇԿԱՊԵՏ Վ. ԱՐԾՐՈՒՆԻ
Վերադարձած լինելով Թիֆլիս, ընդունում է հիւանդներին առաւօտեան ժամը 9—11
երեկոյան » 5—7
Իր բնակարանում, Գոլովինսկի պրոսպեկտում, տուն Միրզոխայի, № 5.
№ 106 3—3

ԹԻՓԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
սրանով յայտնում է ընդհանուր գիտութեան, որ իր դիւանատանը, նոյեմբերի 5-ին ներ-
կայ 1892 թւին, ժամը 12-ին (կէսօրին) կատարվելու է աճուրդ կապալով տարու հա-
մար ՎԼԻՐԱՅԻ ԿԱՄՈՒՐՁԻՑ ստացվող եկամուտը, երկու տարի ժամանակով, այն է
յունվարի 1-ից 1893 թւի, մինչև յունվարի 1-ը 1895 թւի: Կոնդիցիոնները կարելի է
տեսնել Ուսարալայի դիւանատանը, ամեն օր, առաւօտեան 10 ժամից մինչև 1 ժամ կէս-
օրից յետոյ: 3—3 (հ. ե. շ.)

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Պատրաստում ենք հայոց ծխական դպրոցների ուսուցիչներին քաղաքային ծխական
դպրոցի ուսուցչի կոչումը (звание учителя городского-приходского училища) ստա-
նալու քննութիւններ տարու համար: Գիմել Норашенская ул., домъ Гевондянца,
№ 28.

Արամ Նազարեթեանց, Գրիտափոր Միքայէլեանց: № 119 1—5

ԵԼԷԿՏՐՈՆ ԼՈՒՍԱՌՈՐՈՒԹԻՒՆ	ԳԱՋԱՅԻՆ ՆՈՐ ՇԱՐԺԻՉԵՐ
Ուրի հասցենը տարածութեան վրա.	Օտտո սխեմայի, ուրիշը իրանք իրանց են ուղղում օժուժ:
ՏԵԼԵՖՈՆՆԵՐԻ ՍԱՐԲԵԼԸ.	Գաղի համար — աճուրդից,
Էլեկտրական նշաններ.	— — — նաւթից,
ՋԱՆԳԱԿՆԵՐ	— — — անտրացիայից,
ԳԱԼՎԱՆՈՊԼԱՍՏԻԿԱ.	— — — կէրօսինից
Էլեկտրոլիդ.	
Արտաւարտներ, Էլեմենտներ,	РОСТОВЪ (на Дону) 1/2-ից մինչև 120 ձիու ուժի:
ՇԱՆԹԱՐԳԵԼՆԵՐ.	БР. ГЛѢБОВЫ
Նախահայրներ և ծրագիրներ ձրի- արար.	Большая Садовая, 24.
(91—№ 5)	87—100 (հ. շ.)

Ամենապատիւ ՏԵՐ ՏԵՂԱԿԱԼԻ Հաճութեամբ ս. Էջմիածնի ՌԻՍՈՒՄՆԱՐԱ-
ՆԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԾՈՂՈՎԻ կողմից քննիչ նշանակված լինելով վրաստանի և
Իմերեթի թեմի ծխական դպրոցների պատիւ ունեւ խնդրել բոլոր այն անձանց, որոնք
դպրոցական մի որ և է գործով կամենում են տեսակցել ինձ հետ, որ բարեհաճեն դի-
մել տեղիս առաջնորդարանը երեկոյան 4—7 ժամը: Իսկ դրաւոր հարգելով թիւննե-
րը գաւառներէ կարող են ուղարկել մինչև նոյեմբեր ամի 10 հետեւեալ հասցեով:
Թիֆլիս, (Епархіальный домъ) члену Ечмιάдинскаго училищнаго коми-
тета Іеромонаху Леону. № 118 2—3

ՄԻ ՏԻԿԻՆ, որը ապրել է Պարիզում, կամենում է ընտանեկանում դասեր տալ
Ֆրանսերէն լեզուից:
Հասցէն և պայմաններն իմանալ «Մշակի» խմբագրատանը:
№ 108 7—10

ՆՈՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՔԱՐՏԵԶ ԵՒ ՐՕՊԱՅԻ
որը շատ յարմար է զանազան տեղեր դնելու համար՝ լրագիրներ և ամսագիրներ
կարդալու: Գինը 1 ռուբլի, ճանապարհածախսով. Հասցէն.—Москва, у издателя О.
И. Анскаго, Малая Лубянка, д. Ивановскаго Монастыря.
(№ 112) 5—5

ՁՈՒԻ ՍԱՊՈՐՆ
ЯИЧНОЕ КУМЕРНОЕ МЫЛО. ГЛИЦЕРИНОВОЕ ВЪСОВОЕ ЯИЧНОЕ МЫЛО.



Մ. ՄԻՈՒՆԵՐԸՆԿ

7—52 (2) № 86

Новая книга: къ исторіи разбоя на Кавказѣ. «ТАТО
ЦУЛУКИДЗЕ», соч. А. С. Френкеля. Цѣна 1 руб.
Продается у автора, (Тифлисъ, Троицкій пер., д. Рѣчицкаго).—Выписывающіе книгу
посредственно отъ автора, за пересылку ея не платятъ. Кромѣ того можно приобрести: въ Тифлисѣ:
въ книжныхъ магазинахъ быв. Беренштама, Центральномъ, Хидкекеля и др., въ Москвѣ: у А-
нисимова и въ С.-Петербурѣ: у Анисимова, Чичинадзе и Мартынова.
№ 118. 2—3

ՀԱՐԿԱՌՈՐ Ի ՏՆԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՉՈՒՀԻ (Գանձակ քաղաքը
գնալու) երկու փոքրահասակ երեխաների համար:
Պայմանների մասին կարելի է տեղեկանալ «Մշակի» խմբագրատանը:
(№ 114) 5—5

ՀԱՃՈՒԵԿՁԻԹ
Թ Ի Ֆ Լ Ի Ս Ի Ա Ռ Ե Ի Տ Ր Ա Կ Ա Ն Բ Ա Ն Կ Ի
91-ն Հոկտեմբերի 1892

Պ Ա Հ Ա Ն Զ Ք	Թիֆլիսում	Բազուի և Բա- թումի բաժն.	Ընդամենը	Պ Ա Ր Տ Ք	Թիֆլիսում	Բազուի և Բա- թումի բաժն.	Ընդամենը
1. Դրամարկ (առձեռն թղթադրամ).....	119,481—88	173,238—29	292,720—17	1. Հինական դրամադրուս.....	1,000,000 —	— — —	1,000,000 —
2. Ընթացիկ հաշիվ Պետական Բանկ. բաժնում.	166,450 —	319,510 —	785,960 —	2. Պահեստի դրամադրուս.....	202,510—72	— — —	202,510—72
3. Աւանդներ բանկաներում.....	100,000 —	— — —	100,000 —	3. Դրամական աւանդներ՝			
4. Զեղջ (Disconto) մուրհ. երկու ստորագրութ.	2,365,321—53	987,164—59	3,352,486—12	ա) Պայմանաժամով.....	3,018,138 —	638,479 —	3,656,617 —
5. Զեղջ մուրհ. մի ստոր. ապահ. տոկոս. թղթ.	40,000 —	— — —	40,000 —	բ) Գ'Պահանջ.....	300,370 —	65,495 —	365,865 —
6. Զեղջումն տոկոսաբեր թղթ., կարծն. և այլն.	43,284—51	11,585—01	54,869—52	գ) Ընթացիկ հաշուով հարարակ.....	1,003,132—43	1,268,253—48	2,271,385—91
7. Փոխառութիւն դրամակալով				դ) » պայմանաւոր.....	— — —	111,825—57	111,825—57
ա) Պետութիւնից առան. տոկոսաբ. թղթերի.	944,168—59	506,965 —	1,451,133—59	4. Փոխառումն պետ. բանկայի թիֆլ. բաժն.	— — —	— — —	— — —
բ) » ոչ ապահ. »	207,295 —	17,855 —	225,150 —	ապահովված դեղքեալ մուրհակներով. .	— — —	— — —	— — —
գ) ապահովների.....	6,048 —	111,450 —	117,498 —	5. Մասնաւոր ընթացիկ հաշիվ պետ. բանկի	— — —	— — —	— — —
դ) Ոսկու և արծաթի.....	— — —	56,551—07	56,551—07	թիֆլ. բաժն. ապահով. տոկոս. թղթերով	— — —	— — —	— — —
8. Բանկի պատկանեալ տոկոսաբեր թղթեր.	1,212,021—35	61,184—05	1,273,205—40	6. Թղթակցներ՝	— — —	— — —	— — —
9. Ոսկի և արծաթաւանդի փոխանակադրեր.,	3,669—60	8,345—95	12,015—55	ա) Նոցա հաշիւը (Loro).....	10,108,868—44	— — —	10,108,868—44
10. Թղթակցներ՝				բ) Բանկի հաշիւը (Nostro).....	9,192,064—75	— — —	9,192,064—75
ա) Նոցա հաշիւը (Loro).....	10,277,641—68	— — —	10,277,641—68	7. Բաժնիների հաշիւը կենտ. վարչութ. հետ.	— — —	767,288—76	767,288—76
բ) Բանկի հաշիւը (Nostro).....	9,183,592—84	— — —	9,183,592—84	կենտրոն. վարչութ. հաշիւը բաժնի. հետ.	674,039—20	— — —	674,039—20
11. Բաժնիների հաշիւը կենտ. վարչութեան հետ	658,074—63	— — —	658,074—63	8. Բանկի բաժնետոմսերու անվճար կարծն- ների բաշիւը.....	5,812—60	— — —	5,812—60
կենտրոն. վարչութեան հաշիւը բաժնիների				9. Զը վճարուած տոկոսներ, աւանդների,	— — —	— — —	— — —
հետ.....	— — —	735,259—51	735,259—51	ընթացիկ հաշիւների և այլ գործողու- թեանց.....	97,686—97	42,451—52	140,138—49
12. Գնումն և վաճառ. արժեթղթ. ըստ յանձնարա.	74,700 —	— — —	74,700 —	10. Ստացուած տոկոսներ և յանձնարարա- կաններ.....	151,581—35	92,309—38	243,890—73
13. Պայմանաւ. անցուցուած փոխառութիւններ.	24,574 —	31,570 —	56,144 —	11. Փոխանցիկ դրամներ.....	42,240—37	73,619—53	115,859—90
14. Բողոքուած մուրհակներ.....	15,159—05	9,648—75	24,807—80	12. Բողոքված մուրհակներ.....	— — —	— — —	— — —
15. Ընթացիկ ծախսեր.....	41,363—81	22,887—24	64,251—05	13. Արդիւնք 1891 թ.....	— — —	— — —	— — —
16. Կահւաւարար և սկզբնական ծախսեր.....	3,756—75	3,166—96	6,923—71				
17. Յետ ստացուելիք ծախսեր.....	9,841—61	3,340—82	13,182—43				
Ը. Ա.	25,796,444—83	3,059,722—24	28,856,167—07	Ը. Ա.	25,796,444—83	3,059,722—24	28,856,167—07